ՄԱՀ
Տ. ՆՇԱՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆԻ

Մարսիլիո հայ համայնքը ցավով լսեց Պուլվար Օտտո թաղի Ս. Հակոբ եկեղեցվո հոգևոր հովիվ Տ. Նշան ավագ քհն. Գույումճյանի մահվան բոթը: Չիք այլևս մեր մեջ այդ բարի, ազնիվ, միշտ ժպտերես քահանան, որը երեսուն երկար ու ձիգ տարիներ եղավ անխոնջ մշակը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցվո:

Տեր Հայրը կրտսեր զավակն էր տարսոնցի Տեր Միքայել ավագ քհն. Գույումճյանի, ծնած Պեյրութ 1930-ին: Ավազանի անունն էր Մաղաքիա: Տակավին ութամյա մանուկ, 1938-ին կկորսնցնե հայրը՝ Տեր Միքայել ավագ քահանան, սակայն եկեղեցասիրության սերմերը ցանված ըլլալով մանուկ Մաղաքիայի հոգիին մեջ, ան իր կյանքի մեծ մասը կանցնե նախ Պեյրութի Ս. Երրորդություն, ապա Ս. Աստվածածին եկեղեցիներե ներս՝ նախ որպես դպիր, ապա՝ սարկավագ:

1965-ին երբ ճակատագիրն իր առջև կկեցներ օրհորդ Խաթուն Մածունյանին, կկապե իր կյանքը անոր հետ այնպես, որ միայն մահը կրցավ զայն քակել: Իրենց սիրո արտահայտության որպես արդյունք Աստված անոնց կպարգևե երկու արու զավակ՝ Հրանտ և Խաժակ: Եվ այդ ամենուն մեջ Մաղաքիա սարկավագ կտեսներ Նախախնամության օրհնությունը: Եվ զԱստված փնտրելու ճանապարհին կոչումը կունենա ամբողջական նվիրումով հանձնվելու Աստուծո և ազգին: 1967 թ. կընդունվի Անթիլիասի դպրեվանք՝ հետևելու քահանայից մասնավոր դասընթացներուն:

1969-ին, դասընթացներն ավարտելե վերջ, կմեկնի Մարսել, ուր նույն թվականին քահանա կձեռնադրվի ձեռամբ Արտավազդ արքեպիսկոպոս Թրթոյանի՝ վերանվանվելով Նշան քահանա: Ձեռնա-

դրութենե անմիջապես վերջ կստանձնե Մարսիլիո Ս. Հակոբ եկեղեցվո հոգևոր հովվությունը, ուր և կպաշտոնավարե մինչև իր կյանքի վախճանը: Հովվական բարեխիղճ ծառայության համար 1998 թ. իրեն կտրվի քահանայական լանջախաչ, իսկ քահանայագործության 30-ամյա ծառայությունը կգնահատվի, միջնորդությամբ Գերաշնորհ Տ. Տարոն եպիսկոպոս Ճերեճյանի և հավանությամբ Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Բարձրաշնորհ Տ. Գյուտ արքեպիսկոպոս Նագգաշյանի, երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հատուկ կոնդակով, Ծաղկյա փիլոնի և Ավագության տվչությամբ:

Քահանայագործության իր երեսուն տարիներու ընթացքին Աստուծո և բարության սպասավորին սիրեցին ոչ միայն իր հոտի անդամ հավատացյալները, այլև շատեր, իսկ ավելի շատ սիրեց Աստված՝: Եվ երբ բոլորեցավ անոր յոթանասուն տարին, Հայրն ի վերուստ կանչեց անոր, երկրավոր ծառայութենե վերջ անցնելու երկնավոր ծառայության, մարմնավորեն անցնելու հոգեղենի:

Եվ 2000 թվականի հունվար 10-ին ան ալ որպես «հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի», որպեսզի իր գործոց հատիկներու հիշողության հասկերով կարենար ապրիլ հոս՝ մեր սիրտերու մեջ, և գնահատվիլ հոն՝ Երկինքի Արքայության մեջ:

Խունկ, աղոթք և Աստվածային օրհնություն քեզ, ով այր բարի և նվիրյալ մշակդ Աստուծո, որ կոչեցար Նշան ավագ քահանա Գուլումճյան:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎՆԱՆՅԱՆ

Մարսել